ՀՀ վերաքննիչ քրեական դատարանին

Դիմող՝

Թիվ 13130610 քրեական գործով տուժողի

Իրավահաջորդ Սուսաննա Անտոնյանի

Ներկայացուցիչներ՝

Արթուր Սաքունց

Ծանուցման հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան մեծի 59

Արայիկ Զալյան

Ծանուցման հասցե՝ ք. Վանաձոր, Տիգրան մեծի 59

Նախաքննություն իրականացվել է՝

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական

բաժնի քննիչ Ա. Գեղամյան

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔ

(ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2015թ. սեպտեմբերի 16-ի որոշման դեմ)

Նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով

2015թ. սեպտեմբերի 16-ին ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը՝ նախագահությամբ դատավոր Մ.Մակոյանի (այսուհետ՝ դատարան) քննության առնելով բողոքաբերներ Սուսաննա Անտոնյանի ներկայացուցիչներ Արթուր Սաքունցի և Արայիկ Զալյանի դիմում-բողոքը, թիվ 13130610 քրեական գործով՝ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին 2015թ. մայիսի 14-ի որոշումը վերացնելու պահանջով, կայացրել է որոշում այն ամբողջությամբ մերժելու մասին:

1.Գործի դատավարական նախապատմությունը

1.1. 2010 թ. հունվարի 17-ից Արման Սամվելի Անտոնյանը մինչև փետրվարի 27-ն ընկած ժամանակահատվածում չբերության զանգատով բուժման կուրս է անցել Երեան քաղաքի Հր. Քոչար փողոցի 21 հասցեում գործող «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային

կենտրոն» ՍՊԸ-ում՝ բժիշկ-սեքսոպաթոլոգ Ա. Բաղդասարյանի մոտ, որից հետո՝ 2010 թ. մարտ ամսվա վերջերին, առողջական վիճակի կտրուկ վատթարացման հետևանքով տեղափոխվել է Վանաձոր քաղաքի թիվ 1 հիվանդանոցային համալիր, ապա ինֆեկցիոն հիվանդանոց, իսկ այնուհետև՝ 2010 թ. ապրիլի 1-ին՝ ժամը 23:30-ից մինչև 24:00-ն ընկած ժամանակահատվածում, անգիտակից, կոմային վիճակում տեղափոխվել է Երևան քաղաքի Նորքի ինֆեկցիոն հիվանդանոց, որտեղ էլ գիտակցության չգալով՝ 2010 թ. ապրիլի 5-ին մահացել է:

1.2. 2010 թ. հունիսի 23-ին բժշկական օգնություն, սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքի առթիվ ՀՀ քր. օր.-ի 130 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 13130610 քրեական գործը:

1.3. 2012 թ. մարտի 30-ին ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության կենտրոնական քննչական բաժնի ավագ քննիչ Ա. Պողոսյանի կողմից կայացվել է որոշում քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

1.4. 2012 թ. ապրիլի 7-ին ներկայացվել է դիմում-բողոք ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին 2012 թ. մարտի 30-ին կայացված քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման դեմ:

2012 թ. ապրիլի 20-ին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված դիմումը ուղարկվել է ՀՀ Երևան քաղաքի դատախազ Հր. Բաղալյանի քննարկմանը: 2012 թ. ապրիլի 25-ին Հր. Բաղալյանի կողմից կայացվել է որոշում բողոքը մերժելու մասին:

1.5. 2012 թ. մայիսի 2-ին ներկայացվել է դիմում ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության կենտրոնական քննչական բաժնի ավագ քննիչ Ա. Պողոսյանի 30.03.2012 թ. որոշումը վերացնելու պահանջի մասին:

1.6. 2012 թ. հունիսի 27-ին ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է որոշում ներկայացված դիմումը մերժելու մասին:

1.7. 2012 թ. հուլիսի 9-ին ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումը վերացնելու պահանջով ներկայացվել է վերաքննիչ բողոք: 2012 թ. օգոստոսի 31-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ներկայացված վերաքննիչ բողոքը մերժվել է:

1.8. 2012թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թ. օգոստոսի 31-ի որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք՝ նյութական և դատավարական իրավունքի խախտման հիրքով:

1.9. ՀՀ վճռաբեկ դատարանը ներկայացված բողոքի հիման վրա 2013թ. փետրվարի 15-ին կայացրեց որոշումը, որով բողոքը բավարարեց, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012 թվականի հունիսի 27-ի որոշումը և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2012 թվականի օգոստոսի 31-ի որոշումը բեկանել և գործն ուղարկեց Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

1.10. 2013թ. սեպտեմբերի 12-ին ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել Ս. Անտոնյանի կողմից ներկայացված բողոքը բավարարելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտավորեցնելու բողոքի կապակցությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշմամբ արձանագրված Ս. Անտոնյանի իրավունքների խախտումները վերացնելու մասին:

1.11. 2015թ. մայիսի 14-ին ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ա. Գեղամյանի կողմից կայացվել է որոշում քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին:

1.12. 2015թ. մայիսի 30-ին թիվ 13130610 քրեական գործով տուժողի Իրավահաջորդ Սուսաննա Անտոնյանի Ներկայացուցիչ՝ Արայիկ Զալյանի կողմից ներկայացվել է դիմում-բողոք ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազություն՝ ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ա. Գեղամյանի թիվ13130610 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերացնելու և գործն նախաքննության ուղարկելու մասին:

1.13. 2015թ. հունիսի 15-ին ՀՀ դատախազության Երևան քաղաքի դատախազ Ա. Դավթյանի կողմից կայացվել է որոշում ներկայացված դիմում բողոքը մերժելու մասին:

1.14. 2015թ. հուլիսի 2-ին ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ա. Գեղամյանի թիվ 13130610 քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերացնելու պահանջով դիմումատուների կողմից ներկայացվել է դիմում-բողոք դատարան:

1.15. 2015թ. սեպտեմբերի 16-ին ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է որոշում ներկայացված դիմում-բողոքը մերժելու մասին:

2. Վերաքննիչ բողոքի իրավական հիմնավորումները և պահանջը.

2.1. Ա.Անտոնյանի մահվան փաստի առթիվ իրականացված քննության անարդյունավետության մասին պնդումներ.

ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք (...)»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (...)»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ այն դեպքում, երբ անհրաժեշտ է եղել հավաստել, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները ոչ թե տեսական կամ պատրանքային են, այլ գործնական են և

արդյունավետ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի տարբեր հոդվածների համատեքստերում սահմանվել են դատավարական պարտականություններ[1]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածները մեկնաբանել է որպես այդ դրույթների նյութաիրավական կողմերի ենթադրյալ <u>խախտման կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու դատավարական պարտականություն սահմանող նորմեր</u>՝ հաշվի առնելով այս իրավունքների հիմնարար բնույթը[2]:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետը պետություններին պարտավորեցնում է ոչ միայն ձեռնպահ մնալ անձանց կյանքի նկատմամբ դիտավորյալ, անօրինական ոտնձգություններից, այլ նաև սահմանում է, որ պետությունները պետք է իրենց իրավազորության ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանության համար համապատասխան քայլեր ձեռնարկեն[3]:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքի պատշպանությունն անուղղակիորեն պետությունից պահանջում է անձանց մահվան կապակցությամբ պաշտոնապես օբյեկտիվ քննություն իրականացնել: Նման քննություն իրականացնելու պարտականությունը ծագում է բոլոր դեպքերում՝ սպանության կամ <u>կասկած հարուցող մահվան դեպքերում՝ անկախ նրանից, թե հանցանք կատարած անձինք անհատներ են, թե պետական մարմիններ կամ անհայտ անձինք</u>[4]:

<u>Քննությունն արդյունավետ կարող է համարվել այն դեպքում, երբ հնարավոր կլինի քննությամբ ձեռք բերված փաստերը համադրել և հանցանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկել</u>: Իշխանությունները տեղի ունեցած իրադարձությունը բացահայտելու համար <u>պետք է ձեռնարկեն հասանելի, խելամիտ քայլեր</u>՝ վկաների հարցաքննություն, դատաբժշկական փորձաքննության նշանակում, ինչպես նաև դիահերձում, ինչը թույլ կտա բացահայտել առկա վնասվածքների ամբողջական և իրական պատկերը, ինչպես նաև մահվան պատճառը[5]: Քննության եզրակացությունը պետք է հիմնված լինի գործով առկա փաստերի ամբողջական, օբյեկտիվ և անկողմնակալ վերլուծության վրա: Քննության ընթացքում կիրառման ենթակա միջոցները բացարձակ իրավունք չեն սահմանում մեղադրելու կամ դատապարտելու համար և քննության ընթացքում ցանկացած խախտում <u>կամ հանցանք</u>

---

1. տե՛ս B. v. the United Kingdom գործով 1987 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 9840/82, կետ 63, M.C. v. Bulgaria գործով 2003 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 39272/98, կետեր 148-153 և Cyprus v. Turkey գործով 2001 թվականի մայիսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 25781/94, կետ 147:

2. տե՛ս McCann and Others v. The United Kingdom գործով 1995 թվականի սեպտեմբերի 27-ի վճիռը, գանգատ թիվ 18984/91, կետեր 157-164, Ergi v. Turkey գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 23818/94, կետ 82 և Assenov and Others v. Bulgaria գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 24760/94, կետեր 101-106:

3. ի թիվս այլոց, տե՛ս Osman v. the United Kingdom գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 87/1997/871/1083 կետ 115:

4. տե՛ս Nachova and Others v. Bulgaria գործով 2005 թվականի հուլիսի 6-ի վճիռը, գանգատներ թիվ 43577/98, 43579/98, կետ 110:

5. տե՛ս Tanrikulu v. Turkey գործով 1999 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 23763/94, կետ 109 և Gül v. Turkey գործով 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 22676/93, կետ 89:

կատարած անձին չհայտնաբերելը դիտվում է որպես արդյունավետության պահանջի խախտում[6]:

2.2. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ կարելի է պնդել, որ Ա.Անտոնյանը 2009 թվականի նոյեմբեր ամսին չբերության զանգատներով դիմել է «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բժիշկ-սեքսոպաթոլոգ Ա.Բաղդասարյանին և անցել է համապատասխան հետազոտություններ: 2010 թվականի հունվարի կեսերից Ա.Անտոնյանը բժիշկ Ա.Բաղդասարյանի մոտ բուժման կուրս է անցել, որից հետո՝ 2010 թվականի մարտ ամսվա վերջերին, Ա.Անտոնյանի առողջական վիճակը կտրուկ վատացել է, և նա տեղափոխվել է Վանաձոր քաղաքի թիվ 1 հիվանդանոցային համալիր, ապա ինֆեկցիոն հիվանդանոց, որտեղ նրա մոտ ախտորոշվել է «B» հեպատիտ վիրուս դրական: 2010 թվականի ապրիլի 1-ին Ա.Անտոնյանն անգիտակից, կոմային վիճակում տեղափոխվել է Երևան քաղաքի «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոց, որտեղ, գիտակցության չգալով, 2010 թվականի ապրիլի 5-ին մահացել է:

Դեպքի առթիվ հարուցված քրեական գործով նախաքննություն, ինչպես նաև դրա օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին Ա.Անտոնյանի մայրը՝ Ս.Անտոնյանը, բազմիցս պնդել է, որ մահվան պատճառ հանդիսացած հիվանդությունը որդին ձեռք է բերել բժիշկ Ա.Բաղդասարյանի մոտ հետազոտվելու և բուժում ստանալու ընթացքում:

Տուժողի իրավահաջորդի այս հայտարարություններն ակնհայտ անհիմն չեն և ենթադրում են, որ Ա.Անտոնյանի մահվան կապակցությամբ իրականացված քննության արդյունավետությունը գնահատելու համար նախնառաջ պետք է պարզել, թե մինչդատական վարույթն իրականացնող մարմինը գործով հավաքված փաստական տվյալների ամբողջական, օբյեկտիվ և անկողմնակալ վերլուծության հիման վրա հերքե՞լ է արդյոք բողոքաբերի վերոնշյալ պնդումը:

2.3. Սույն գործով իրականացված քննչական գործողությունների և դրանց արդյունքում ձեռք բերված փաստական տվյալների վերլուծության հիման վրա կարելի է պնդել, որ՝

ա) վարույթն իրականացնող մարմինն անմիջապես չի կատարել անհրաժեշտ անհետաձգելի քննչական գործողություններ, մասնավորապես միջոցներ չի ձեռնարկել «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ից Ա.Անտոնյանի վերաբերյալ փաստաթղթերը և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այլ պարագաները (հիվանդության պատմագրերը, իրականացված հետազոտությունների արդյունքները, բժշկական միջամտության առարկաները և այլն) առգրավելու ուղղությամբ: Դրա փոխարեն նախաքննության մարմինը գրությամբ դիմել է «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ի ղեկավարությանը՝ խնդրելով քննությանը տրամադրել Ա.Անտոնյանի վերաբերյալ առկա բոլոր փաստաթղթերը, որին ի պատասխան ընկերության ղեկավարությունը հայտնել է, որ հիվանդության պատմագիրը տրվել է հիվանդին

6.տե՛ս Esat Bayram v. Turkey գործով 2009 թվականի մայիսի 26-ի վճիռը, զանգատ թիվ 75535/01, կետ 47 և Ramsahai and Others v. the Netherlands գործով 2007 թվականի մայիսի 15-ի վճիռը, զանգատ թիվ 52391/99, կետ 321:

առձեռն: Գործի հետագա քննության ընթացքում Ա.Անտոնյանի հիվանդության պատմագիրն այդպես էլ <u>չի հայտնաբերվել:</u>

բ) Մինչդատական վարույթն իրականացնող մարմինը չի պարզել «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում Ա.Անտոնյանի հետ նույն <u>ժամանակահատվածում բուժում ստացած անձանց շրջանակը և նրանց ախտորոշումները:</u>

Վերոնշյալ նշված ենթակետերում նշված գործողությունների կատարման պարագայում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կստանար պարզելու, թե մահվան պատճառ հանդիսացած հիվանդությունը Ա.Անտոնյանը ձեռք է բերել մինչև «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում հետազոտվելը և բուժում ստանալը, թե այդ ընթացքում:

2.4. Այդուհանդերձ, սույն գործով ստացված դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններն էլ չեն բացառում այն պնդումը, թե Ա. Անտոնյանը հեպատիտ «B» հիվանդությամբ վարակվել է «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում հետազոտվելու և բուժում ստանալու ընթացքում:

Նշված եզրակացությունների համաձայն՝ Ա.Անտոնյանի մահը վրա է հասել սուր լյարդային անբավարարությունից, լյարդային էնցեֆալոպաթիայից, որոնք զարգացել են ֆուլմինանտ (կայծակնային չարորակ ընթացք) վիրուսային հեպատիտ «B»-ի հետևանքով: Հեպատիտ «B» հիվանդությունը ձեռք է բերվում պարենտերալ (արյան միջոցով) և սեռական ճանապարհով:

Փորձագետները, չբացառելով բժշկական միջոցառումների ժամանակ հիվանդի՝ որևէ վարակիչ հիվանդությամբ, այդ թվում՝ հեպատիտ «B»-ով վարակվելու հնարավորությունը, շեշտել են, որ տվյալ հիվանդությամբ Ա.Անտոնյանի վարակումը կարող էր լինել հիվանդության առաջին նշաններն ի հայտ գալուց մոտ 1,5-ից մինչև 6 ամիս առաջ ընկած ժամանակահատվածում, ինչը ժամանակային առումով նույնպես համընկնում է «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում Ա.Անտոնյանի կողմից հետազոտվելու, իսկ այնուհետև նաև բուժում ստանալու ժամանակահատվածին: Փորձագետները շեշտել են նաև, որ թեև Ա.Բաղդասարյանի կողմից իրականացված բուժօգնության ընթացքում ախտորոշման առումով արյան հետազոտություն կատարելը հեպատիտ «B»-ի հայտնաբերման համար պարտադիր չէր, սակայն մինչ համապատասխան բուժումներ նշանակելը, հատկապես հեպատոտոքսիկ ազդեցություն ունեցող այնպիսի դեղամիջոցների, ինչպիսին հանդիսանում է անտիբիոտիկ ռիֆամպիցինը, նպատակահարմար էր կատարել արյան քննություն հեպատիտ «B»-ի հայտնաբերման, ինչպես նաև լյարդի ֆունկցիոնալ վիճակը պարզելու առումով:

2.5. Ա.Բաղդասարյանը քննության ընդացքում հայտնել է, որ Ա.Անտոնյանը մինչև իրեն դիմելը բազմաթիվ անգամներ չբերության դեմ բուժում է ստացել այլ բժշկական հաստատություններում: Ա.Բաղդասարյանը չի բացառել նաև, որ Ա.Անտոնյանն ունեցել է արտամուսնական կապեր: Մինչդեռ տուժողի մայրը և կինն իրենց ցուցմունքներում հերքել են Ա.Անտոնյանի կողմից այլ բժշկական հաստատություններում բուժում ստանալու հանգամանքը: Ա.Անտոնյանի կինը՝ Գ.Նիկոլաևան, իր ցուցմունքներում նշել է նաև, որ քանի որ

իրենք երեխա չեն ունեցել և բուժում ստանալիս են եղել, բժիշկներն իրենց խորհուրդ են տվել ընդհանրապես զերծ մնալ սեռական հարաբերություններից, մինչև վերջնական բուժումը: Վիրուսային հեպատիտ հիվանդություն հայտնաբերելու նպատակով իրականացված՝ Գ.Նիկոլանայի արյան լաբորատոր հետազոտությունը բացասական արդյունք է տվել:

Նախաքննության մարմինը մի շարք միջոցառումներ է ձեռնարկել պարզելու, թե արդյոք Ա.Անտոնյանն ունեցել է արտամուսնական կապեր, օգտագործել է թմրանյութ կամ որևէ այլ բժշկական հաստատությունում բժշկական օգնություն ստացել է (այդ թվում՝ չբերության գանգատներով), թե ոչ: Իրականացված բոլոր միջոցառումների արդյունքները եղել են բացասական, քննությամբ ձեռք չի բերվել որևէ փաստական տվյալ, ինչը հիմք կտար կարծելու, որ Ա.Անտոնյանը հեպատիտ «B» հիվանդությունը ձեռք է բերել սեռական ճանապարհով, թմրանյութ օգտագործելու արդյունքում կամ այլ հաստատությունում բժշկական օգնություն ստանալիս:

2.6. 2011 թվականի փետրվարի 24-ին նախաքննության մարմինը գրությամբ դիմել էր ՀՀ առողջապահության նախարարություն՝ խնդրելով տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե վերջին երեք տարիների ընթացքում ՀՀ-ում հեպատիտ «B» կայծակնային տեսակի հիվանդության դեպքեր գրանցվել են, թե ոչ և եթե այո, ապա հայտնել հիվանդների կենսագրական տվյալները և նրանց բուժօգնություն ցուցաբերած հաստատությունների ցանկը: Միաժամանակ խնդրվել է հայտնել ՀՀ բուժհաստատություններում հիվանդության պատմագրերը պահպանելու և հաշվառելու ինչ կարգ է գործում, ինչպես նաև պարզաբանել, թե բուժող բժիշկն իրավասու է արդյոք հիվանդի անվամբ լրացված հիվանդության պատմագիրը բուժման կուրսն ավարտելուց հետո հանձնել վերջինիս և չպահպանել այն տվյալ հաստատության արխիվում:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող նշված գրությունը մնացել է անպատասխան: Մեկ տարի անց՝ 2012 թվականի փետրվարի 20-ին, նախաքննության մարմինը կրկին նույնաբովանդակ գրություն է ուղարկել ՀՀ առողջապահության նախարարություն, որին ի պատասխան 2012 թվականի մարտի 14-ին ստացվել է գրություն այն մասին, որ «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ի գործունեությունն իրականացվում է իր կանոնադրության համաձայն: Բացի այդ, տեղեկացվել է, որ վարչական վիճակագրական հաշվետվությամբ առողջապահության նախարարություն են ներկայացվում վիրուսային հեպատիտ «B»-ի ընդհանուր դեպքերը, իսկ վիրուսային հեպատիտ «B»-ի կայծակնային կլինիկական ախտանիշներով դեպքերը հաշվետվական ձևով չեն ներկայացվում, ուստի վերոնշյալի վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն ներկայացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ տվյալների հավաքագրում, իսկ արդյունքների մասին լրացուցիչ կտեղեկացվի:

Դրանից հետո նախաքննության մարմինը որևէ միջոց չի ձեռնարկել գործի օբյեկտիվ քննության ապահովման համար հանգուցային նշանակություն ունեցող վերոնշյալ երկու հարցերի պարզաբանման ուղղությամբ, մասնավորապես, չի փորձել սպառիչ պատասխան ստանալ այն հարցին, թե ի վերջո ՀՀ բուժհաստատություններում հիվանդության պատմագրերը պահպանելու և հաշվառելու ինչ կարգ է գործում, ինչպես նաև չի պահանջել և ստացել գրանցված վիրուսային հեպատիտ «B»-ի ընդհանուր կամ կայծակնային կլինիկական ախտանիշներով դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ելնելով վերոգրյալից կարելի է պնդել, որ Ա.Անտոնյանի մահվան փաստի առթիվ արդյունավետ քրեադատավարական քննություն չի իրականացվել:

3. Ա.Անտոնյանի մահվան փաստի առթիվ հարուցված քրեական գործով՝ չի իրականացվել և չի ձեռնարկել օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար.

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի երրորդ մասի՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար:

Նախաքննության ընթացքում անպատասխան են մնացել ստորև նշված հարցերը,

3.1. հնարավոր էր արդյո՞ք հայտնաբերել, թե ինչպես է ի հայտ եկել հիվանդությունը Ա. Անտոնյանի մոտ

3.2. ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվել այն ուղղությամբ, որ Ա. Անտոնյանը բժշկական քարտ չի ունեցել

3.3. Ա. Անտոնյանի մոտ եղել է արդյո՞ք արյունահոսություն, թե ոչ

3.4. քանի՞ անգամ է կատարվել պարինտերիալ միջամտություն, ո՞ր բուժհաստատությունում և ինչպե՞ս

3.5. պարինտերիալ միջամտությունից կարո՞ղ էր անցնել վարակը, թե ոչ

3.6. մինչ Ա. Անտոնյանի հիվանդանալը այն հաստատություններում, որտեղ Ա. Անտոնյանը ստացել է բժշկական միջամտություն, տվյալ ժամանակահատվածում նման վիրուս կրող անձիք բուժվել են, թե ոչ

3.7. տվյալ ժամանակահատվածում Ա. Անտոնյանի մոտ առկա հիվանդությամբ այլ անձ Հայաստանի Հանրապետությունում մահացել է, թե ոչ

3.8. հետազոտվել է արդյո՞ք Ա. Անտոնյանի կինը, թե ոչ

3.9. եթե տվյալ վիրուսը ձեռք չի բերվել բժշկական ոչ ճիշտ միջամտության արդյունքում, ապա ինչպես կարող էր վիրուսը չանցնել կնոջը սեռական ճանապարհով:

4. 2013թ. փետրվարի 15-ին ՀՀ վճռաբեկ դատարանը վարույթ ընդունելով Արման Անտոնյանի իրավահաջորդ՝ Սուսաննա Անտոնյանի վճռաբեկ բողոքը, կայացրել է այն բավարարելու մասին որոշում, որով արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից, քննության ընթացքում մի շարք հարցերի շուրջ քննություն չի իրականացվել, ինչը գործի լուծման համար էական նշանակություն ունի և այդ հարցերի ուղղությամբ քննություն չկատարելու դեպքում չի կարելի համարել, որ կատարված քննությունը եղել է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ:

Սույն գործով իրականացված քննչական գործողությունների և դրանց արդյունքում ձեռք բերված փաստական տվյալների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ՝

4.1. վարույթն իրականացնող մարմինն անմիջապես չի կատարել անհրաժեշտ անհետաձգելի քննչական գործողություններ, մասնավորապես միջոցներ չի ձեռնարկել «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ից Ա.Անտոնյանի վերաբերյալ փաստաթղթերը և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այլ պարագաները (հիվանդության պատմագրերը, իրականացված հետազոտությունների արդյունքները, բժշկական միջամտության առարկաները և այլն) առգրավելու ուղղությամբ: Դրա փոխարեն նախաքննության մարմինը գրությամբ դիմել է «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ի ղեկավարությանը՝ խնդրելով քննությանը տրամադրել Ա.Անտոնյանի վերաբերյալ առկա բոլոր փաստաթղթերը, որին ի պատասխան ընկերության ղեկավարությունը հայտնել է, որ հիվանդության պատմագիրը տրվել է հիվանդին առձեռն: Գործի հետագա քննության ընթացքում Ա.Անտոնյանի հիվանդության պատմագիրն այդպես էլ չի հայտնաբերվել:

Վճռաբեկ դատարանի կողմից արձանագրված սույն խախտմանը վերացնելու ուղղությամբ վարույթն իրականացնող մարմնի կողմից դիմում է ներկայացվել ՀՀ ԱՆ, որով խնդրել է տրամադրել Ա. Անտոնյանի հիվանդության պատմագիրը, սակայն ՀՀ ԱՆ ստացված պատասխանով հայտնել են, որ Խորհրդային միության տարիների «Սեքսոպաթոլոգիայի» տեղեկատու ձեռնարկի համաձայն՝ բացի բուժող բժշկից ոչ ոք չի կարող առընչվել անձի հիվանդության պատմագրի հետ և բուժման ավարտից հետո այն հանձնվում է հիվանդին:

Սույն դեպքում Ա. Անտոնյանի տվյալ բժշկական հաստատությունում բուժման վերաբերյալ հիվանդության պատմագիր չի լրացվել և այն վերջինիս չի հանձնվել, ինչը հստակ երևում է գործի նյութերից: Իսկ եթե Արման Անտոնյանի հիվանդության պատմագիրը կազմվել է, ապա այն քննչական գործողությունների արդյունքում անմիջապես չվերցնելու արդյունքում այն կարող էր անհետանալ: Առանց հիվանդության պատմագիրն ունենալու գրեթե անհնար է որոշել, թե տվյալ հաստատությունում ինչ բժշկական օգնություն է ցուցաբերվել և արդյուք ցուցված է եղել նման օգնությունը:

4.2. Մինչդատական վարույթն իրականացնող մարմինը չի պարզել «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում Ա.Անտոնյանի հետ նույն ժամանակահատվածում բուժում ստացած անձանց շրջանակը և նրանց ախտորոշումները:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նշված խախտումն արձանագրելուց հետո, քննություն չի իրականացրել պարզելու «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում Ա.Անտոնյանի հետ նույն ժամանակահատվածում բուժում ստացած անձանց շրջանակը և նրանց ախտորոշումները:

4.3. Տվյալներ ունենալով առ այն, որ բժիշկ Ա.Բաղդասարյանի կողմից նշանակված բուժման գործընթացն անմիջականորեն իրականացրել է բուժքույր Ս.Շահուվարյանը (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը)՝ նախաքննության մարմինը երբևէ չի հարցաքննել նրան:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից հարցաքննվել է Ս. Շահուվարյանը, ով իր ցուցմունքում նշում է, որ Ա. Անտոնյանը չէր կարող իրենց կլինիկայում վարակվել հեպատիտ Բ-ով և նշել է, որ Ա. Անտոնյանի անհատական քարտը բուժման ավարտին տրամադրվել է իրեն:

Ս. Շահուվարյանի կողմից տրված ցուցմունքը բնականաբար սուբյեկտիվ էր լինելու, քանի որ վերջինս աշխատում է տվյալ հաստատությունում և որոշակի հանգամանքների նկատմամբ պատասխանատվություն է կրում, ուստի նման ցուցմունքը հետագայում արժանահավատ համարելը արդարացված չէ:

Այսպիսով, վերը նշված 3 հարցի վերաբերյալ կատարված քննության տվյալներից ելնելով, արձանագրում ենք, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից վերստին կատարվել է թերի և ոչ ամբողջական քննություն, անտեսվել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արձանագրված խախտումները և քննությամբ չի բացահայտվել Ա. Անտոնյանի մահվան հանգամանքները և Ա. Անտոնյանի մահվան մեջ պատասխանատու անձիք:

ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից վերը նշված 3 հարցերի վերաբերյալ լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն իրականացնելու դեպքում միայն պարզ կլիներ, թե մահվան պատճառ հանդիսացած հիվանդությունը Ա.Անտոնյանը ձեռք է բերել մինչև «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում հետազոտվելը և բուժում ստանալը, թե այդ ընթացքում, ինչն էլ էական նշանակություն ունի գործի ելքի համար:

4.4. Վկայակոչված որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պատկան մարմինները, չպահպանելով քրեադատավարական օրենքի պահանջները, շահագրգիռ երրորդ կողմին՝ Ս.Անտոնյանին, մասնակից չեն դարձրել որդու մահվան պատճառները բացահայտելու նպատակով նշանակված դատաբժշկական փորձաքննություններին: Նախաքննության մարմինը վերջինիս է ներկայացրել արդեն հաստատված փաստերը, ex post facto մահվան պատճառը բացահայտող փորձաքննությունների արդյունքները: Այն, որ բողոքաբերը որպես շահագրգիռ երրորդ կողմ չի մասնակցել գործի քննության և լուծման համար էական նշանակություն ունեցող վերոնշյալ քննչական գործողություններին, խոչընդոտել է վերջինիս իրավունքների իրացմանը և սահմանափակել քննությանը նրա մասնակցության հնարավորությունը՝ դրանով կասկածի տակ դնելով կատարված քննչական գործողությունների արդյունքները:

Այդուհանդերձ, սույն գործով ստացված երկու դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններն էլ չեն բացառում բողոքաբերի այն պնդումը, թե իր որդին հեպատիտ «Բ» հիվանդությամբ վարակվել է «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում հետազոտվելու և բուժում ստանալու ընթացքում: Նշված եզրակացությունների համաձայն՝ Ա.Անտոնյանի մահը վրա է հասել սուր լյարդային անբավարարությունից, լյարդային էնցեֆալոպաթիայից, որոնք զարգացել են ֆուլմինանտ (կայծակնային չարորակ ընթացք) վիրուսային հեպատիտ «Բ»-ի հետևանքով: Հեպատիտ «Բ» հիվանդությունը ձեռք է բերվում պարենտերալ (արյան միջոցով) և սեռական ճանապարհով:

Փորձագետները, չբացառելով բժշկական միջոցառումների ժամանակ հիվանդի՝ որևէ վարակիչ հիվանդությամբ, այդ թվում՝ հեպատիտ «Բ»-ով վարակվելու հնարավորությունը,

շեշտել են, որ տվյալ հիվանդությամբ Ա.Անտոնյանի վարակումը կարող էր լինել հիվանդության առաջին նշաններն ի հայտ գալուց մոտ 1,5-ից մինչև 6 ամիս առաջ ընկած ժամանակահատվածում, ինչը ժամանակային առումով նույնպես համընկնում է «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում Ա.Անտոնյանի կողմից հետազոտվելու, իսկ այնուհետև նաև բուժում ստանալու ժամանակահատվածին: Փորձագետները շեշտել են նաև, որ թեև Ա.Բաղդասարյանի կողմից իրականացված բուժօգնության ընթացքում ախտորոշման առումով արյան հետազոտություն կատարելը հեպատիտ «B»-ի հայտնաբերման համար պարտադիր չէր, սակայն մինչ համապատասխան բուժումներ նշանակելը, հատկապես հեպատոտոքսիկ ազդեցություն ունեցող այնպիսի դեղամիջոցների, ինչպիսին հանդիսանում է անտիբիոտիկ ռիֆամպիցինը, նպատակահարմար էր կատարել արյան քննություն հեպատիտ «B»-ի հայտնաբերման, ինչպես նաև լյարդի ֆունկցիոնալ վիճակը պարզելու առումով:

Սույն հարցի վերաբերյալ, խնդիրը կայանում է նրանում, որ առաջին անգամ գործի քննության ընթացքում հաստատված փաստերը, նշանակված փորձաքննության եզրակացությունները, հետագայում նույնական են եղել, միմյանց կրկնող, որի արդյունքում էլ անհնար է եղել իրավունքի խախտման փաստը և մահվան պատճառահետևանքային կապը բուժման և բժշկական միջամտության միջև պարզելու, որը թերևս գործի լուծման համար կարևոր նշանակություն ունի: Գործի քննության սկզբնական փուլում Ս. Անտոնյանը վարույթն իրականացնող մարմնի անօրինական գործողությունների արդյունքում զրկված է եղել արդյունավետ պաշտպանության իրավունքից: Այս հարցին ևս նախաքննության մարմինը որևե անդրադարձ չի կատարել:

4.5. Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ բժիշկ Ա.Բաղդասարյանը քննությանը հայտնել է, որ Ա.Անտոնյանը մինչև իրեն դիմելը բազմաթիվ անգամներ չբերության դեմ բուժում է ստացել այլ բժշկական հաստատություններում: Ա.Բաղդասարյանը չի բացառել նաև, որ Ա.Անտոնյանն ունեցել է արտամուսնական կապեր: Մինչդեռ տուժողի մայրը և կինն իրենց ցուցմունքներում հերքել են Ա.Անտոնյանի կողմից այլ բժշկական հաստատություններում բուժում ստանալու հանգամանքը: Ա.Անտոնյանի կինը՝ Գ.Նիկոլաևան, իր ցուցմունքներում նշել է նաև, որ քանի որ իրենք երեխա չեն ունեցել և բուժում ստանալիս են եղել, բժիշկներն իրենց խորհուրդ են տվել ընդհանրապես զերծ մնալ սեռական հարաբերություններից, մինչև վերջնական բուժումը: Վիրուսային հեպատիտ հիվանդություն հայտնաբերելու նպատակով իրականացված՝ Գ.Նիկոլաևայի արյան լաբորատոր հետազոտությունը բացասական արդյունք է տվել :

Նախաքննության մարմինը մի շարք միջոցառումներ է ձեռնարկել պարզելու, թե արդյոք Ա.Անտոնյանն ունեցել է արտամուսնական կապեր, օգտագործել է թմրանյութ կամ որևէ այլ բժշկական հաստատությունում բժշկական օգնություն ստացել է (այդ թվում՝ չբերության զանգատներով), թե ոչ: Իրականացված բոլոր միջոցառումների արդյունքները եղել են բացասական, քննությամբ ձեռք չի բերվել որևէ փաստական տվյալ, ինչը հիմք կտար կարծելու, որ Ա.Անտոնյանը հեպատիտ «B» հիվանդությունը ձեռք է բերել սեռական ճանապարհով, թմրանյութ օգտագործելու արդյունքում կամ այլ հաստատությունում բժշկական օգնություն ստանալիս:

Տվյալ փաստական հանգամանքները ամրապնդում են այն վարկածը, որ Ա. Անտոնյանը հեպատիտ «B» հիվանդությունը ձեռք է բերել «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ում, որի ուղղությամբ ևս նախաքննության մարմինը չի անդրադարձել:

4.6. Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ նախաքննության մարմինը դեռևս 2011 թվականի փետրվարի 24-ին գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն՝

խնդրելով տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե վերջին երեք տարիների ընթացքում ՀՀ-ում հեպատիտ «B» կայծակնային տեսակի հիվանդության դեպքեր գրանցվել են, թե ոչ և եթե այո, ապա հայտնել հիվանդների կենսագրական տվյալները և նրանց բուժօգնություն ցուցաբերած հաստատությունների ցանկը: Միաժամանակ խնդրվել է հայտնել ՀՀ բուժհաստատություններում հիվանդության պատմագրերը պահպանելու և հաշվառելու ինչ կարգ է գործում, ինչպես նաև պարզաբանել, թե բուժող բժիշկն իրավասու է արդյոք հիվանդի անվամբ լրացված հիվանդության պատմագիրը բուժման կուրսն ավարտելուց հետո հանձնել վերջինիս և չպահպանել այն տվյալ հաստատության արխիվում:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող նշված գրությունը մնացել է անպատասխան: Մեկ տարի անց՝ 2012 թվականի փետրվարի 20-ին, նախաքննության մարմինը կրկին նույնաբովանդակ գրություն է ուղարկել ՀՀ առողջապահության նախարարություն, որին ի պատասխան 2012 թվականի մարտի 14-ին ստացվել է գրություն այն մասին, որ «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն» ՍՊԸ-ի գործունեությունն իրականացվում է իր կանոնադրության համաձայն: Բացի այդ, տեղեկացվել է, որ վարչական վիճակագրական հաշվետվությամբ առողջապահության նախարարություն են ներկայացվում վիրուսային հեպատիտ «B»-ի ընդհանուր դեպքերը, իսկ վիրուսային հեպատիտ «B»-ի կայծակնային կլինիկական ախտանիշներով դեպքերը հաշվետվական ձևով չեն ներկայացվում, ուստի վերոնշյալի վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն ներկայացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ տվյալների հավաքագրում, իսկ արդյունքների մասին լրացուցիչ կտեղեկացվի:

2015թ. մարտի 26-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից վարույթն իրականացնող մարմնին է ներկայացվել պատասխան գրություն, որով հայտնել է, որ «Սեքսոպաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոն»-ում, ինչպես նաև հիվանդության պատմագրերը պահպանելու և հաշվելու հարցում սեքսոպաթոլոգների համար դեռևս խորհրդային միության տարիներից ուղեցույց է հանդիսանում «Սեքսոպաթոլոգիա» ձեռնարկը, որտեղ հստակ մատնանշվում է, որ բացի բուժող բժշկից, ոչ մեկը չի կարող առնչվել հիվանդության պատմագրերի հետ, որը բուժման ավարտին տրամադրվում է հիվանդին: Միաժամանակ նշելով, որ մինչ օրս որևէ այլ հրահանգ չի ստացվել, ուստի շարունակում է գործել նախկինը:

Դրանից հետո նախաքննության մարմինը որևէ միջոց չի ձեռնարկել գործի օբյեկտիվ քննության ապահովման համար հանգուցային նշանակություն ունեցող վերոնշյալ երկու հարցերի պարզաբանման ուղղությամբ, մասնավորապես, չի փորձել սպառիչ պատասխան ստանալ այն հարցին, թե ի վերջո ՀՀ բուժհաստատություններում հիվանդության պատմագրերը պահպանելու և հաշվառելու ինչ կարգ է գործում, ինչպես նաև չի պահանջել և ստացել գրանցված վիրուսային հեպատիտ «B»-ի ընդհանուր կամ կայծակնային կլինիկական ախտանիշներով դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը: ՀՀ առողջապահության նախարարության:

4.7. Տուժողի ընտանիքի անդամների պնդմամբ 2010 թվականի մարտի 27-ին, երբ Ա.Անտոնյանի առողջական վիճակը կտրուկ վատացել է, բարձրացել է ջերմությունը և նա չի կարողացել շարժվել, իրենք ահազանգել են Վանաձոր քաղաքի շտապ օգնության անձնակազմին, որոնք ժամանելով՝ ստուգել և հայտնել են, որ կարիք չկա անհանգստանալու, և Ա.Անտոնյանի մոտ ուղղակի գրիպային վիճակ է: 2010 թվականի մարտի 30-ին Ա.Անտոնյանի վիճակն ավելի է վատացել, կրկին շտապ օգնության կանչ են գրանցել և ժամանած անձնակազմը նորից պնդել է, որ նրա մոտ գրիպային վիճակ է: 2010 թվականի մարտի 31-ին,

տեսնելով, որ Ա.Անտոնյանի վիճակը գնալով վատանում է, շտապ օգնության ավտոմեքենայով նրան տեղափոխել են հիվանդանոց:

«Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր» ՓԲԸ-ի շտապ օգնության բաժանմունքից քննությամբ առգրավված կանչի թերթիկները նույնպես վկայում են, որ շտապ օգնության բրիգադը մի քանի անգամ այցելել է վատառողջ Ա.Անտոնյանին, նրա մոտ ախտորոշել ստենոկարդիայի նոպա և համապատասխան օգնություն ցուցաբերել:

Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը որևէ իրավական գնահատական չի տվել Ա.Անտոնյանին առաջին բուժօգնություն ցուցաբերած շտապ օգնության աշխատակիցների կողմից իրենց մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում ցուցաբերած թերացումներին:

Սույն քննության շրջանակներում ևս վարույթն իրականացնող մարմինը որևէ գործողություն չի իրականացրել պարզելու Ա.Անտոնյանին առաջին բուժօգնություն ցուցաբերած շտապօգնության աշխատակիցների կողմից իրենց մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում ցուցաբերած թերացումները և բացթողումները, չնայած այն հանգամանքին, որ Ս. Անտոնյանը այս մասին բազմիցս իր բողոքներում և հարցաքննություններում նշել է:

5. Հիմք ընդունելով սույն բողոքի 2-րդ, 3-րդ և 4-րդ գլուխներում շարադրված վերլուծությունը գտնում ենք, որ սույն գործով ստորադաս դատարանի կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք հիմք են ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2015թ. սեպտեմբերի 16-ի որոշումը բեկանելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քրեադատավարական օրենքի էական խախտումներ են դատական քննության ժամանակ սույն օրենսգրքի սկզբունքների և այլ ընդհանուր դրույթների խախտումները, որոնք (...) խոչընդոտել են գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, ազդել են կամ կարող էին ազդել գործով ճիշտ որոշում կայացնելու վրա»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ, 376, 378 և 381 հոդվածների պահանջները.

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ՝

- բեկանել ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2015թ. սեպտեմբերի 16-ի որոշումը,
- ընդունել նոր դատական ակտ, վերացնելով դիմումատուների իրավունքների և ազատությունների խախտումները և գործն ուղարկել նախաքննության:

Կից ներկայացվում է

1. ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2015թ. սեպտեմբերի 16-ի որոշման պատճենը:
2. ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2015թ. սեպտեմբերի 16-ի որոշումը 2015թ. սեպտեմբերի 26-ին ստանալը հավաստող փոստային ծրարի պատճենը:
3. Վերաքննիչ բողոքի օրինակը դատական ակտ կայացրած դատարանին, վարույթն իրականացնող մարմնին և ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելու վերաբերյալ փոստային կտրոնների պատճենները:

Դիմող՝ Տուժողի իրավահաջորդ Ս. Անտոնյանի

Ներկայացուցիչներ՝ Ա. Սաքունց

Ա. Զալյան

06.10.2015 թ.